

ՆՈՐ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐ ԱՍԵՐԻԿՅԱՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴԱՄԱՆ ՇՈՒՐՁ

Ինչպես հայտնի է, լեզուների մեծ մասը պատմականորեն գոյատևում են իրենց ազգային տարբերակներով (national varieties): Դա վերաբերում է նաև անգլերենին, որը կիրառվում է բրիտանական, ամերիկյան, կանադական, ավստրալիական, աֆրիկյան ամերիկյան, հարավային աֆրիկյան, շոտլանդական, նոր զելանդական տարբերակներով: Իր տարածման ընթացքում «անգլերենը զանազանակերպվել է՝ հարմարվելով տեղական պայմաններին և մշակույթներին, այնպես որ յուրաքանչյուր երկրում գոյություն ունեն անգլերենի տարբերակներ՝ բարբառներ»¹: Սակայն աշխարհում բրիտանական և ամերիկյան տարբերակները թվարկվածներից ամենատարածվածն են: Պետք է նշել, որ Հայաստանի, ինչպես նաև մյուս նոր անկախացած պետություններում գործող բուհերի օտար լեզուների ֆակուլտետներում ավանդաբար դասավանդվում է անգլերենի բրիտանական ազգային տարբերակը, դրանով իսկ հաճախ անտեսվում է ամերիկյան անգլերենը: Թերևս մոռացվում է այն կարևոր հանգամանքը, որ վերջին տասնամյակներում ամերիկյան անգլերենն է, որ դարձել է աշխարհի ամենակիրառվող տարբերակը, այլ կերպ ասած՝ միջազգային անգլերենը: Դա կարելի է ապացուցել մի շարք փաստերով: Նախ, աշխարհի գրականության մոտ 70 տոկոսը գրվում և հրատարակվում է ամերիկյան անգլերենով: Մասնավորապես Հայաստան ներմուծվող գրականության հիմնական մասը ամերիկյան ծագում ունեն և բնականաբար գրված են ամերիկյան անգլերենի տարբերակով: Բացի այդ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքական ասպարեզում վճռորոշ դերը հաճախ կատարում է ԱՄՆ-ն, քաղաքականության լեզուն հիմնականում ամերիկյան անգլերենն է: Պակաս կարևոր չէ նաև այն, որ ամերիկյան անգլերենը ինտերնետի լեզուն է, իսկ վերջինս դարձել է միջազգային հաղորդակցման հիմնական միջոցը:

Ամերիկյան անգլերենի խոր իմացությունն առավել կարևորվում է այժմ, երբ Հայաստանը միջմշակութային կապեր է հաստատում և զարգացնում աշխարհի շատ երկրների հետ: Վերջին շրջանում Հայաստանի համար բավականին բնորոշ է դարձել վերապատրաստման նպատակով աշակերտների, ուսանողների և դասախոսների արտասահման գործուղելը: Նմանատիպ կրթական վերապատրաստումները, որպես կանոն, տեղի են ունենում հենց ԱՄՆ-ում:

Հայտնվելով ԱՄՆ-ում, անգլերեն ուսումնասիրող հայ ուսանողները կարող են որոշակի լեզվական դժվարությունների առջև կանգնել՝ կապված հիմնականում բառային, հնչյունաբանական, ինչպես նաև որոշ քերականական առանձնահատկությունների հետ, որոնք ամենևին բնորոշ չեն հայ ուսանողների ուսումնասիրած բրիտանական տարբերակին: Ավելին, վերջին շրջանում Հայաստանի բուհերն են այցելում ամերիկացի մասնագետներ, ում անգլերենը բավականաչափ տարբերվում է այն անգլերենից, որն ուսումնասիրում են մեր ուսանողները և որին տիրապետում են մեր դասախոսները: Այստեղ նույնպես կարող են առաջանալ որոշակի լեզվական դժվարություններ՝ կապված վերոհիշյալ առանձնահատկությունների հետ:

Ելնելով այս ամենից, կարևոր ենք համարում ամերիկյան անգլերենի խորը ուսումնասիրությունը ՀՀ բուհերի օտար լեզուների ֆակուլտետներում: Ամերիկյան անգլերենի գիտական մակարդակի ուսուցանումը անտարակույս կհարստացնի անգլերեն ուսումնասիրող հայ ուսանողների թե՛ տեսական, թե՛ գործնական գիտելիքները: Առաջինը ենթադրում է նախ և առաջ ամերիկյան անգլերենի լեզվապատմական, ինչպես նաև զուտ պատմական սկզբնաղբյուրների ուսուցանումը: Մասնավորապես, «առաջին անգլախոս վերաբնակիչները Ամերիկայում շարունակում էին խոսել այնպես, ինչպես Անգլիայում: Սակայն լեզուն շարունակում էր փոփոխվել Ատլանտիկ օվկիանոսի երկու ափերում»²: Սույն զուգահեռ տեղի ունեցող փոփոխությունների իմացությունը խիստ անհրաժեշտ է ապագա բանիմաց մասնագետի համար:

Այստեղ կարևորվում են նաև լեզվաաշխարհագրական, այն է՝ լեզվաերկրագիտական գիտելիքների ուսուցումը, ինչը սերտորեն կապված է բարբառագիտության (դիալեկտոլոգիայի) հետ, որը նոր առարկա կլինի օտար լեզուների ֆակուլտետներում: Սա ենթադրում է նախ և առաջ ԱՄՆ-ի տարածքային բարբառների ուսուցում, այն է՝ երկրի հյուսիսային, միջին և հարավային շրջանների բարբառների, ինչպես նաև արևելք-արևմուտք տարածքային բարբառների ուսուցում:

Ավելին՝ խոսելով ամերիկյան անգլերենի և դրա դասավանդման մասին, պետք է նշել, որ ամերիկյան անգլերենի յուրաքանչյուր տարածքային բարբառ իր հերթին ենթաբաժանվում է սոցիալական, այն է՝ հասարակական բարբառների: Հասարակական բարբառների տակ հասկանում ենք բարձր, միջին և ցածր խավի ներկայացուցիչների բարբառները, որոնք ունեն իրենց բնորոշ հնչյունաբանական, բառային և քերականական յուրահատկությունները: Հասարակական բարբառները տարբերվում են միմյանցից և պայմանավորված են նրանով, «թե լեզվի կրողների կրթական, նյութական և այլ հասարակական

հատկանիշներով»³: Այս լեզվական տարամետումների հետ կապված նրբությունների չիմացությունը հաճախ մասնագիտական օբյեկտիվ դժվարություններ է ստեղծում հայ ուսանողների և, ինչու չէ, երբեմն նույնիսկ արդեն կայացած մասնագետների համար: Այստեղից էլ հայ ուսանողների մոտ ստեղծվում է այն թերի, սակայն օբյեկտիվ կարծիքը, թե իբր ամերիկյան անգլերենը առավել դժվար է ընկալել, քան բրիտանականը, մինչդեռ իրողությունն այլ է:

Այսպիսով, ամերիկյան անգլերենի ուսուցումը սերտորեն առնչվում է այլ լեզվաբանական գիտակարգերի հետ՝ սոցիոլեզվաբանության, բարբառագիտության, լեզվի պատմության և լեզվաաշխարհագրության հետ: Մյուս կողմից, ամերիկյան անգլերենի տարածքային և նահանգային տարամետումները և դրանց նախապատճառները, լավագույնս հասկանալու համար պետք է ճիշտ պատկերացում ունենալ Ամերիկայում 18-19 դդ. ինչպես նաև 20-րդ դարի սկզբում տեղի ունեցած գաղթի պատմության մասին, քանզի, ինչպես ցույց տվեցին մեր ուսումնասիրությունները, գաղթը Եվրոպայից Ամերիկա 18 դարում և Ամերիկայի արևելյան, այն է՝ Ատլանտիկ օվկիանոսին հարող նահանգների բնակչության գաղթը դեպի արևմուտք, զգալի հետք թողեցին ամերիկյան տարածքային բարբառների առանձնահատկությունների վրա: Դրանով է պայմանավորվում ամերիկյան տարածքային և նահանգային բարբառների միջև գոյություն ունեցող տարբերությունները, ինչու չէ, նաև մեկ նահանգի սահմաններում գտնվող քաղաքների լեզվի միջև եղած տարբերությունները: Սրանով է պայմանավորված ամերիկյան անգլերենի ուսուցումը աշխարհագրության հետ, մի բան, որը խիստ կարևոր է ցանկացած լեզվի տարբերակի խորը ուսումնասիրության համար:

Խոսելով ամերիկյան անգլերենի մասին՝ պետք է հիշել այն կարևոր փաստը, որ ամերիկյան անգլերենը ձևավորվել է հիմնականում 18-19-րդ դարերի ընթացքում, երբ տեղի է ունեցել գաղթը Եվրոպայի տարբեր երկրներից դեպի Ամերիկա: Բնակվելով Ամերիկայի այս կամ այն մարզում կամ նահանգում՝ տվյալ ներգաղթած հանրությունը ակամա իր լեզվական ազդեցությունն էր թողնում անգլերենի վրա, քանզի «օտար լեզուն միշտ իր հետքն է թողնում՝ երբեմն արտասանության մեջ, երբեմն քերականական համակարգում, և առավել հաճախ բառապաշարում»⁴: Այստեղ տեղին է նշել գերմաներեն, շոտլանդերեն, սկանդինավյան, ֆրանսերեն, իսպաներեն, աֆրիկյան, հոլանդերեն և մի շարք սլավոնական լեզուները, որոնք որոշակի հետք են թողել ԱՄՆ-ի անգլերենի վրա: Յուրաքանչյուր հանրություն, գաղթելով և հիմնվելով ԱՄՆ-ում՝ որոշակիորեն ներմուծում է իր մշակույթը, ավանդույթները, բառապաշարը, մշակութային տերմինները, որոնք ներթափանցում են ԱՄՆ-ի անգլերենը՝

արտացոլելով տվյալ ազգության մշակույթը⁵։ Ուստի, ամերիկյան անգլերենի ուսուցումը ունի միջմշակութային նշանակություն, քանզի ուսուցանելով ամերիկյան անգլերենի բառապաշարը, մենք ակամա ուսուցանում ենք նաև տարբեր ազգությունների մշակութային տարրերը։ Վերջինիս իմացությունը, կարծում ենք, խիստ կարևոր է մեր հայ ուսանողության համար, քանզի Հայաստանը ներկայումս ներգրավված է եվրոխորհուրդ, ինչը ունի միջմշակութային նշանակություն։

Ցանկանում ենք ընդգծել նաև այն փաստը, որ ամերիկյան անգլերենի ուսուցումը զգալիորեն կնպաստի բրիտանական անգլերենի իմացությանը։ Հարկ է հիշել, որ ամերիկյան տարբերակը առաջացել է բրիտանականից, ուստի ուսումնասիրելով ամերիկյան տարբերակի պատմությունը, նրա սկզբնաղբյուրները, հետագա զարգացումը, մենք ակամա համեմատում ենք այն բրիտանական տարբերակի հետ, և այդ համեմատության լույսի ներքո գիտելիք ենք ծեռք բերում բրիտանական անգլերենի մասին, որը ներկայումս ուսումնասիրում են մեր ուսանողները։ Զուգադրելով բրիտանական և ամերիկյան տարբերակները տարաժամանակյա լույսի ներքո՝ մեր ուսանողները լրացուցիչ կարևոր գիտելիք են ծեռք բերում բրիտանական անգլերենի պատմական զարգացման շուրջ, քանզի հայտնի է, «որ ամերիկյան անգլերենը որոշ փոփոխություններով հիմնականում հանդիսանում է 17րդ դարի բրիտանական անգլերենը»⁶։ Ավելին՝ ժամանակակից ամերիկյան և բրիտանական անգլերենի զուգադրումը հնարավորություն է ստեղծում լրացուցիչ գիտելիք ծեռք բերել ժամանակակից բրիտանական անգլերենի վերաբերյալ։ Այս գիտելիքները հաճախ ժամանակի պակասության պատճառով դուրս են մնում բրիտանական անգլերենի դասավանդման ժամանակ։ Ամերիկյան անգլերենի համեմատումը բրիտանականի հետ անտարակույս կհարստացնի մեր ուսանողների գիտելիքները բրիտանական անգլերենի բառապաշարի, քերականության և հնչյունաբանության վերաբերյալ։ Ելնելով այս ամենից, երկու տարբերակների ուսուցումը, ընդհանուր առմամբ, կհարստացնի մեր ուսանողների անգլերենի իմացությունը։

Ծանոթագրություններ

1. Th. Pyles, J. Algeo. The Origins and Development of the English Language, , Harcourt Brace Company, 1993, p. 233.
2. Նույն տեղում, p. 214.
3. Jeame Herndon. A Survey of modern Grammars. 1972, p. 105
4. W. Nelson Francis. The Structure of American English. New York 1958, p. 527.
5. Նույն տեղում, p. 528
6. Kurath, Studies in Dialectology. English Beyond the British Isles. 1978, p. 165